

2.6. ԱՐՏԱՔԻՆ ՀԱՏՎԱԾ

Համաձայն Ծառայության և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի միջև 2010 թվականի դեկտեմբերի 17-ի ստորագրված երկկողմանի փոխըմբռնման հուշագրի դրույթների, 2011 թվականից սկսած Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և արտաքին պարտքի (արտաքին հաշիվների) վիճակագրության վարումը (վերջնական կառուցումը) Ծառայությունից տեղափոխվել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ: Համաձայն փոխըմբռնման հուշագրի, Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվների որոշ հոդվածների վերաբերյալ (հիմնականում մասնավոր հատվածի գծով) տեղեկատվությունը հավաքագրվելու է Ծառայության կողմից և ամփոփ տեսքով (ըստ վճարային հաշվեկշռի ստանդարտ հոդվածների) տրամադրվելու է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին: Միևնույն ժամանակ, Ծառայությունը կազմել է վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածները, ինչպես նաև վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի վերաբերյալ վերջնական ցուցանիշները Հայաստանի Հանրապետության ԿԲ-ն տրամադրել է Ծառայությանը՝ Ծառայության հրապարակումներում և տվյալների բազաներում զետեղելու համար:

Մասնավորապես, հաշվետու ժամանակահատվածում կազմվել են.

-2012 թվականի IV եռամսյակի և տարեկան, 2013 թվականի I, II, III, IV եռամսյակների և տարեկան, 2014 թվականի I, II, III, IV եռամսյակների և տարեկան, ինչպես նաև 2015 թվականի I, II և III եռամսյակների վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի «Ապրանքներ» և «Ծառայություններ» հոդվածները:

Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշռի, միջազգային ներդրումային դիրքի և համախառն արտաքին պարտքի վերաբերյալ ցուցանիշները 2013 թվականին զուգահեռաբար հաշվարկվել են Արժույթի միջազգային հիմնադրամի «Վճարային հաշվեկշռի ձեռնարկ 5»-ի և «Վճարային հաշվեկշռի և միջազգային ներդրումային դիրքի ձեռնարկ 6»-ի մեթոդաբանության:

Աշխատանքներ են իրականացվել օտարերկրյա (ներառյալ՝ օտարերկրյա ուղղակի) ներդրումների, ինչպես նաև միջազգային ծառայությունների հաշվառման դաշտի բարելավման և ցուցանիշների գնահատման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ:

2013 թվականին Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության, Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի, Հայաստանում դոնոր կազմակերպությունների՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ Մարդկային զարգացման գործակալության Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի շրջանակում իրականացվել է «Ժամանողների և մեկնողների ընտրանքային հետազոտություն», որի արդյունքների հիման վրա վերանայվել են ներգնա և արտագնա զբոսաշրջիկների ընդհանուր թվաքանակի հաշվարկման գործակիցները և իրականացվել են աշխատանքներ զբոսաշրջության հաշվառման դաշտի բարելավման ուղղությամբ:

Սկսած 2009 թվականի մայիսից, Ծառայության պաշտոնական կայքէջում գետեղվել են Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի ցուցանիշների (արտահանում և ներմուծում՝ ըստ ապրանքի ծագման երկրի և առևտուր անող երկրի հատկանիշների) տեղեկատվական շտեմարաններ ամսական կտրվածքով, որոնք ընդգրկում են տեղեկատվություն ըստ գործընկեր երկրների 1995 թվականից: Շտեմարանն արդիականացվում է ամսական պարբերականությամբ:

Միաժամանակ, սկսած 2015 թվականից ներդրվել է ապրանքների գծով փոխադարձ առևտրի վիճակագրությունը՝ համաձայն «Արտաքին առևտրի մաքսային վիճակագրության և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ պետությունների փոխադարձ առևտրի վիճակագրության վարման միասնական մեթոդաբանության» և ապահովվել է անցում (անցումային բանալիների) գործող դասակարգչին համապատասխան (համաձայն «ԵԱՏՄ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի»):

Տարեկան պարբերականությամբ հրապարակվել են՝

1.«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 2-նիշ դասակարգման), որն արտացոլում է 2009-2014 թվականների արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի բաժինների և խմբերի, ըստ առանձին երկրների, ամփոփ՝ Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) երկրներով, արտաքին աշխարհի և Եվրոպական միության երկրներով, ըստ «Միջազգային առևտրի ստանդարտ» և «Ընդլայնված տնտեսական կատեգորիաների» դասակարգման:

2.«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 4-նիշ դասակարգման), որն արտացոլում է արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի դիրքերի (ենթախմբերի), ինչպես նաև առանձին՝ ըստ բեռնամաքսային հայտարարագրերի տվյալների (իրավաբանական անձինք), ըստ ֆիզիկական անձանց կողմից կազմակերպած առևտրի տվյալների:

3.«Հայաստանի Հանրապետության արտաքին առևտուրը» վիճակագրական ժողովածուն (ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի 8-նիշ դասակարգման), որն արտացոլում է արտահանման և ներմուծման ծավալները (բնաիրային և արժեքային արտահայտությամբ) ըստ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացուցակի բաժինների և խմբերի:

4.«Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվները» վիճակագրական ժողովածուն, որն արտացոլում է հանրապետության արտաքին տնտեսական գործառնությունների վերաբերյալ տվյալները և երկրի ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների պաշարների մակարդակը ժամանակահատվածի սկզբի և վերջի դրությամբ: